Հավելված N 2
2024 թվականի հունվարի 22-ին կնքված
1032-11003/24-ԿԾ պայմանագրի

**ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 5**

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի տրամադրում և սոցիալապես անապահով անձանց սննդի կազմակերպում» |
| Դրամաշնորհի N | Լոտ 14. Կոտայքի մարզ – Ծաղկաձոր |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2024-31. 12. 2024թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.01.2024-31. 12. 2024թթ |
| Ներկայացման օր | 07.01.2025 |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Հասմիկ Մանուկյան<br>Թիմ լիդեր |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սննդի (տաք ճաշի) տրամադրում,
- սոցիալական խորհրդատվություն,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- **Սննդի (տաք ճաշ) տրամադրման ծառայության** շրջանակներում կազմակերպության նախագահի կողմից հաստատված ճաշացանկով, ճաշարանում շաբաթական 5 օր տրվել է տաք ճաշ, ինչպես նաև սուրճ, թեյ, միրգ և քաղցրավենիք: Հաշվետու ժամանակահատվածում ծառայությունից օգտվել է 75 շահառու:
- **Սոցիալական խորհրդատվության տրամադրման** շրջանակներում սոցիալական աշխատողը ճաշարան դիմող անձանց տեղեկատվություն է տրամադրել ճաշարանից օգտվելու կարգի վերաբերյալ, վերահսկել ճաշարան հաճախող շահառուների հաճախելիությունը, ճշտել բացակայությունների պատճառները, անհրաժեշտության դեպքում իրականացրել տնայցեր: Սոցիալական աշխատողը պարբերաբար խորհրդատվություն է տրամադրել շահառուներին իրենց իրավունքների, համայնքում գործող սոցիալական ծրագրերի վերաբերյալ: Սոցիալական աշխատողի կողմից իրականացվել է 19 դեպքի վարում ( 8 անձի համար ընտանիքների անապահովության գնահատման համակարգում վերափաստագրում, 4 անձի համար անվճար բուժօգնության կազմակերպում, 3 անձի համար աջակցող միջոցների ստացում, 3 անձի համար անձնագրի վերականգնում, 1 անձի համար եռամսյակային օգնության կազմակերպում): Հաշվետու ժամանակահատվածում շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով իրականացվել է 90 ուղղորդում, միջամտություն/միջնորդում այլ կառույցներ:

- **Այլ ծառայությունների տրամադրում.**
  - Հոգեբանական աջակցության կարիք ունեցող 30 շահառուի հոգեբանը անհատական խորհրդատվություն է տրամադրել, իսկ 13 շահառու ներգրավվել են հոգեբանական խմբային հանդիպումներում:
  - Հրազդանի և Չարենցավանի ճաշարանների 47 շահառու մասնակցել է կենտրոնում կազմակերպված միջոցառումներին:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**
Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրված նյութերի հղումները առկա են եռամսյակային հաշվետվություններում:
Անորդյա միջոցառման նյութը (տե՛ս հետևյալ հղմամբ՝
[http://surl.li/ywkydz,](http://surl.li/ywkydz)
[http://surl.li/ncdcjs,](http://surl.li/ncdcjs)
[https://shorturl.at/n0KaU](https://shorturl.at/n0KaU) ):

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչընդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

Ծրագրի նպատակին հասնելու համար աշխատակազմի հմտությունները զարգացնելու. աշխատանքները արդյունավետ կազմակերպելու նպատակով ցերեկային կենտրոնի պատասխանատուի կողմից կազմակերպվել են թիմային քննարկումներ և դեպքերի ուսումնասիրություններ:
Հրազդանի Ցերեկային կենտրոնի պատասխանատուն մասնակցել է ՄՍԾՏԿ-ի գործող 6 համակարգող խորհրդի նիստի եւ հոգաբարձուների խորհրդի 8 նիստի: Ինչպես նաեւ մասնակցություն է ցուցաբերել «Հասանելի համայնքային սոցիալական ծառայություններ» ծրագրի ամփոփիչ հանդիպմանը:

Չարենցավանի կենտրոնի պատասխանատուն մասնակցել է ՄՍԾՏԿ-ի գործող 2 համակարգող խորհրդի նիստի, ձեռք է բերվել համաձայնություն՝ առաջադրել կենտրոնի կարիքավոր շահառուների ցանկ. որոնք նույնպես կստանան համապատասխան աջակցություն Սոցիալական Աշխատողների Ասոցացիայի կողմից՝ ՄԱԿ-ի ֆինանսավորմամբ:
Չարենցավանի և Հրազդանի սոցիալական աշխատողները մասնակցել են «Հայկական Կարիտաս»-ի կողմից կազմակերպված «Տարեցների հետ տարվող սոցիալական խնամքը» թեմայով առցանց դասընթացին:
Մասնակցություն է ցուցաբերվել ՄՍԾ-ի Հրազդանի տարածքային կենտրոնի կողմից կազմակերպված «Աշխատանքի տոնավաճառ» միջոցառմանը:

Մարզում գործող բոլոր ճաշարանների խոհարարները մասնակցել են «Առողջ սնուցման հիմունքները» մասնագիտական ինտերակտիվ եռօրյա դասընթացին, որը կազմակերպվել էր The holy digital-ի հետ համատեղ: Կենտրոնական գրասենյակի կողմից կազմակերպվել է դասընթացներ «Անձի ֆունկցիոնալության գնահատում», «Դեպքի վարում», «Տրավմա» թեմաներով:

Ձևաչափ

# ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ճաշարանի շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 75/72 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 45 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 25 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 11 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 2 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 23 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 45 |
| 1.4 | երեխաներ (միայն ճաշարանի պարագայում) | 0 |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | 73 |
| 3. | Այլ ծառայություն (նշել)<br>Հոգեբանական ծառայություններ<br>Միջոցառումների կազմակերպում | 6<br>12<br>37 |

Կազմակերպության գործադիր տնօրեն՝ Է. Մխիթարյան «07» 01.2025թ